Այս բոլորից հետևում է, որ ազոտաքիմիական քարտեզը դարձել է չափազանց կարևոր փաստաթուղթ, առանց որի հնարավոր չէ իրականացնել պարարտանյութերի դիֆերենցված ու արդյունավետ օգտագործումը:

Սակայն չպետք է մոռանալ, որ ազոտաքիմիական քարտեզները մշտական չեն: Շնորհիվ գյուղատնտեսության քիմիացման և բույսերի բերքի հետ մատչելի սննդանյութերի հեռացման, հողերի մատչելի սննդանյութերով ապահովվածությունը աստիճանաբար փոփոխվում է և ամեն 4—5 տարին մեկ անգամ անհրաժեշտ է դառնում ազոտաքիմիական քարտեզը վերաբերվել:

Սակայն ազոտաքիմիական քարտեզագրման վրա կատարված ծախսերը ոչինչ են համեմատած այն հսկայական միջոցների հետ, որ անտեղի կորչում են պարարտանյութերի ոչ ճիշտ օգտագործման հետևանքով:

սինթետիկ մանրաթելերի արտադրությունը:

Այդ մանրաթելերից առավել արժեքավոր են և տարածված՝ կապրոնը, նայլոնը, անիդը, նիտրոնը, լավսանը և վինիլոնը: Սրանք ունեն կիրառման լայն ու բազմապիսի բնագավառներ, սկսած մուշտակներից, ամեն տեսակ զգեստներից, գուլպաներից, բավիչից ու մորթիներից, մինչև ավտոմեքենաների, խոշոր տրանսպորտյորների ժապավենների արտադրությունը: Արհեստական մանրաթելերից վինիլոնը ձկնորսական պարագաներ պատրաստելու համար անփոխարինելի նյութ է, իսկ ջրում լուծելի տեսակը օգտագործվում է վիրաբուժության մեջ՝ ներքին օրգաններում վիրահատման կարեր դնելու համար:

Դժվար է գերագնահատել քիմիական մանրաթելերի արտադրության հեռանկարները: Անսահմանափակ են նրա հնարավորությունները և չափազանց լայն՝ զարգացման հեռանկարները:

ԽՈՍՈՒՄ ԵՆ ԹՎԵՐԸ...

100 միլիոն տոննա պարարտանյութը լրացուցիչ կարող է տալ՝

8 միլիարդ փութ հացահատիկ,
170 միլիոն տոննա կարտոֆիլ,
13 միլիոն տոննա շաքար,
8 միլիոն տոննա բամբակ, վուշ, կանեփ:

* * *

Հանքային պարարտանյութերի արտադրության ձեռնարկությունների շինարարության մեջ ներդրված միջոցները լիովին հանում են իրենց ծախսը մեկուկեսից երկու տարվա ընթացքում:

* * *

250 նոր քիմիական գործարան ու ցեխեր են շարք մտել յոթնամյակի չորսուկես տարում:

* * *

Արհեստական կաշվի արտադրությունը 15—20 անգամ ավելի էժան է նստում բան բնական կաշվինը, և աշխատանքային ծախքերն էլ գրեթե 100 անգամ ավելի պակաս են:

* * *

100 տոննա բնական կաուչուկ ստանալու համար 100 մարդ պետք է 5 տարի աշխատի պլանտացիաներում: Իսկ 100 տոննա սինթետիկ կաուչուկ քիմիական գործարանում կարող է տալ 5 բանվոր 1 օրում:

digitised by A.R.A.R.@